

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

1. 2022 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզպետարանի անձնակազմի կառավարման բնագավառում կատարված աշխատանքների մասին:

Անձնակազմի կառավարման բնագավառում ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից իրականացվել են գործող օրենսդրությամբ և մարզպետարանի կանոնադրությամբ սահմանված հետևյալ աշխատանքները.

1. Նախապատրաստվել և ՀՀ Շիրակի մարզպետի հաստատմանն է ներկայացվել մարզպետարանի 2022 թվականի հաստիքացուցակը՝ հաշվարկելով յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի պաշտոնային դրույքաչափի բնականոն աճի գործակիցները:
2. 2021 թվականի երկրորդ կիսամյակի և 2022 թվականի առաջին կիսամյակի ավարտից հետո հավաքագրվել, ստուգվել և Գլխավոր քարտուղարին են ներկայացվել բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների կողմից ներկայացված գնահատված անձնային և (կամ) կառավարչական հմտությունները և կատարողականի ընդհանուր գնահատականները, ինչպես նաև յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո ՀՀ վարչապետին է ներկայացվել ՀՀ Շիրակի մարզպետարանի կատարողականը և ստորաբաժանումների ղեկավարների կատարողականների գնահատականները:
3. Նախապատրաստվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային ծրագրի նախնական տարբերակը, աշխատակազմից ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակումից հետո այն հաստատվել է:
4. *Հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակման և ազատման ժամանակ՝ սահմանված ժամկետներում, համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:*
5. Իրականացվել են սոցիալական փաթեթի շահառուների էլեկտրոնային համակարգի վարման աշխատանքները, սոցիալական փաթեթները սպասարկող բանկերին ներկայացվել են գրություններ՝ սոցիալական փաթեթի շահառուների վերաբերյալ:
6. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են թվով 23 մրցույթներ /2021թ-ին 8 մրցույթ/, որոնցից չի կայացել թվով 4 մրցույթ՝ թեստավորմանը մասնակցելու թույլտվություն չստանալու պատճառով, բոլոր 23 մրցույթները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակով ուղիղ հեռարձակվել են /2021թ-ին 4 մրցույթ/, թվով 6 մրցույթի /2021թ-ին 1 մրցույթի/ արդյունքում

հաղթող չի ճանաչվել, ընդհանուր առմամբ ընդունվել են թվով 123 դիմումներ /2021թ-ին 19 դիմում/, որոնցից թվով 46-ը մերժվել են /2021թ-ին 6 դիմում/՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու պատճառով: Մրցույթների արդյունքներով համապատասխան պաշտոնների են նշանակվել թվով 15 /2021թ-ին 6/ քաղաքացիական ծառայողներ, որոնցից թվով 7 /2021թ-ին 2/ քաղաքացիական ծառայողների համար սահմանվել է փորձաշրջան՝ քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնելու կապակցությամբ:

7. Կազմակերպվել և իրականացվել են 2022 թվականին վերապատրաստման ենթակա թվով 20 /2021թ-ին 72/ քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման գործընթացները: Դրանք իրականացվել են քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված կոմպետենցիաների և Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված մասնագիտական դասընթացների ժամանակացույցերին համապատասխան՝ թվով 9 /2021թ-ին 0/ մասնագիտական վերապատրաստման ծրագրերով և թվով 7 /2021թ-ին 23/ կոմպետենցիաների վերապատրաստման ծրագրերով կազմակերպված դասընթացների միջոցով՝ ընդամենը 62 /2021թ-ին 115/դասաժամ, որոնցից 10-ը /2021թ-ին 84/առկա ուսուցմամբ, իսկ 52-ը /2021թ-ին 31/՝ հեռավար:
8. Նշանակվել են թվով 6 ծառայողական քննություններ /2021թ-ին 0/, որոնց արդյունքում կարգապահական տույժի են ենթարկվել 13 քաղաքացիական ծառայողներ, 1 գործով նյութերն ուղարկվել են դատախազություն՝ համապատասխան իրավական գնահատական տալու նպատակով: Ծառայողական քննություններից 2-ը դադարեցվել են՝ ծառայողական քննություն վարողների միջնորդությամբ:
9. Իմ կողմից ստորագրվել են անձնակազմի կառավարմանը վերաբերող թվով 768 /2021թ-ին 629/ հրամաններ, նախապատրաստվել և ՀՀ Շիրակի մարզպետի հաստատման են ներկայացվել թվով 675 /2021թ-ին 451/ որոշումների նախագծեր: Անձնակազմի կառավարման բնագավառում ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից իրականացվել են նաև չալանավորված և այլ ընթացիկ աշխատանքներ, պատասխանվել են հարցումների, գրությունների՝ ընդհանուր թվով 395 /2021թ-ին 326/, որից քաղաքացիների դիմումների՝ թվով 97 /2021թ-ին 67/, տրամադրվել են տեղեկանքներ, պարզաբանումներ, տեղեկատվություն, կատարվել են մարզպետի հանձնարարականներ:
10. Ընթացիկ տարում ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից տարածքային պետական կառավարման ապահովում՝ ապարատի պահպանում միջոցառմանը հատկացվել է 624,3 մլն. դրամ: Կանխատեսվում է, որ դրամարկղային ծախսը մինչև տարեվերջ կկազմի 623,9 մլն. դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը, ակնկալվում է 398,0 հազար դրամ տնտեսում: Շեղումը պայմանավորված է նախատեսվածից ցածր գներով ապրանքների և

ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև ներքին գործուղումների գծով ծախսերի նվազմամբ: ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով և ՀՀ Կառավարության որոշումներով նախատեսվել են մարզպետարանի միջոցով իրականացվող թվով 12 ծրագրեր՝ 26 միջոցառումներով, որոնք բոլորն էլ իրականացվել են: Ներկայումս ընթանում է և մինչև տարեվերջ կավարտվի 2023 թվականի համար ապրանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով գնումների գործընթացը:

11. Մարզպետարանի կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին ֆինանսական օգնության տրամադրումը իրականացվել է ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգի» համաձայն: Աշխատակարգով սահմանվել են ֆինանսական օգնության տրամադրման չափորոշիչներ, նաև սահմանվել է, որ գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի կազմը որոշվելու է մարզպետի կողմից՝ դիմումների քննարկումից անմիջապես առաջ՝ մշտապես ենթարկվելով փոփոխությունների: Այս կարգավորումները նպատակ են հետապնդում գործընթացը դարձնել առավելագույնս նպատակային և թափանցիկ: 2022 թվականի հունվարի 3-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում սոցիալական ապահովության բաժին է մակագրվել 1738 ֆինանսական օգնության վերաբերյալ դիմում /2021թ-ին 2386/: Ուսումնասիրված և ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբերի քննարկմանը ներկայացված դիմումներից ՀՀ Շիրակի մարզպետի համապատասխան որոշումներով ֆինանսական օգնություն է տրամադրվել 998 քաղաքացու /2021թ-ին 973/: ՀՀ Շիրակի մարզպետի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի» աշխատակարգի համաձայն՝ փոփոխվել և բարձրացվել է ֆինանսական օգնության առավելագույն չափը: Վերանայվել և բարձրացվել է նաև ֆինանսական օգնության տրամադրման նվազագույն չափը: Ներկայումս առկա է ուսումնասիրված 243 դիմում և եզրակացությունները պատրաստ են ներկայացվելու աշխատանքային խմբի քննարկմանը, ևս 96 դիմում դեռևս գտնվում է ուսումնասիրության փուլում:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյան

2. ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2022 թվականի 11 ամիսների կատարման մասին:

2022թ. դեկտեմբերի 16-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 86.4 %-ով, նախատեսված 3,538,203.2 հազ. դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 3,055,612.1 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 482,591.1 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2022թ. բյուջեների տարեկան սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2022թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+, -/	կատ. %
Անշարժ գույքի հարկ	580,022.0	494,233.6	- 85,788.3	85.2
Գույքահարկ փոխադրամիջոցներից	1,488,102.0	1,245,808.6	- 242,293.4	83.7
Պետական տուրք	49,950.0	69,940.3	19,990.3	140.0
Տեղական տուրք	143,855.4	138,044.0	- 5,811.4	96.0
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	401,075.8	318,169.5	- 82,906.3	79.3
ա/ հողի վարձավճար	345,539.7	261,417.3	- 84,122.4	75.7
բ/ գույքի վարձավճար	55,536.1	56,752.2	1,216.1	102.2
Այլ եկամուտներ	875,198.1	789,416.0	- 85,782.1	90.2
Ընդամենը սեփական եկամուտներ	3,538,203.2	3,055,612.1	- 482,591.1	86.4

2022թ. տասներկու ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2021թ. համեմատությամբ կազմում է 6.2% կամ ավել է հավաքագրվել 179,387.3 հազ. դրամ:

Ըստ մարզի համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

h/h	Համայնքների անվանումը	2022թ. 12 ամիսների սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+, -/	կատ. %
1.	Արթիկ	496,266.1	463,130.7	- 33,135.4	93.3
2.	Գյումրի	1,914,976.9	1,730,020.6	- 184,956.3	90.3
3.	Ամասիա	106,024.9	92,265.4	- 13,759.5	87.0
4.	Աշոցք	142,098.2	118,813.0	- 23,285.2	83.6
5.	Անի	241,451.8	179,604.5	- 61,847.3	74.4
6.	Ախուրյան	637,385.2	471,777.8	- 165,607.4	74.0

Մարզի խոշորացված համայնքներից 2022թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ախուրյան համայնքում՝ 74.0%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 64.4% կամ աճի տոկոսը կազմում է 5.6, գումարային աճը կազմել է 25,046.1 հազ. դրամ:

Մարզի թվով 3 համայնքներ չեն ապահովել 2022թ. տասներկու ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 86.4%-ը:

ՀՀ պետական բյուջեով 2022 թվականին տարեկան ամիսներին նախատեսված 6,467,424.9 հազ. դրամ «Դոտացիան» ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Մարզի համայնքներին ՀՀ պետական բյուջեից 2022 թվականի ընթացքում «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով հատկացվել է 817,144.5 հազ. դրամ, որից փաստացի ֆինանսավորվել է 766,920.6 հազ. դրամ:

Մարզի հրատապ ծրագրով հատկացվել է 531,029.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության որոշումամբ «Արթիկի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին կտուրի վերանորոգման համար հատկացվել է 10,069.0 հազ. դրամ:


Մարզպետարանի ենթակա կազմակերպություններին 2022 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումները լրիվությամբ կատարվել են:

*Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական
գարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան*

3. 2022 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում փաստացի իրականացված սուբվենցիոն ծրագրերի և 2023 թվականի համար ներկայացված հայտերի մասին

ՀՀ կառավարության 2006 թվականի 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն 2022 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել թվով 31 տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով ծրագրեր, 123 ենթածրագրերով:

Ծրագրերի ընդհանուր նախահաշվային գումարը կազմում է **7 մլրդ 192 մլն 765 հազ դրամ**, որից



Բնակավայրերում իրականացված ծրագրերի քանակը (%).
Ախուրյան համայնք՝ 27%, Արթիկ՝ 63%, Անի՝ 53%, Աշոցք՝ 56%, Ամասիա՝ 16%


Ըստ ոլորտների

Ծրագրի ոլորտը	Ենթա-ծրագրերի քանակ	Ծրագրի սկզբ. (հազ. դրամ)	Արդյունք
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում	36	3,364,549.7	14.4 կմ
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, սալարկվամբ, խճապատմամբ	6	253,802.6	4.1 կմ
Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում	8	380,392.8	19,2 կմ, 4404 շահառու
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	7	705,725.7	1014 հա, 14. 3կմ
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	12	105,526.1	409 լուսատու, 14 կմ
Բնակավայրերի գազաֆիկացում	3	58,252.1	2.3 կմ
Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում	14	921,776.3	1700 երեխայի համար
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում	25	175,754.2	3326 քմ


Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում	9	922,310.2	19175 քմ 1400 շահառու
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	1	127,607.9	3730 քմ
Մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում	2	177,068.0	4 միավոր տեխնիկա
Ընդամենը	123	7,192,765.5	

Ըստ համայնքների

	Գյումրի	Ախուրյա ն	Արթիկ	Անի	Աշոցք	Ամասի ա	Ըն դ
Ավարտված և ֆինանսավորված	0	0	0	4	1	3	8
Ավարտված	21	0	0	0	16	0	37
Ընթացքում	7	11	20	5	2	0	45
Մրցույթային փուլում	25	0	8	0	0	0	33
ԸՆԴԱՄԵՆԸ	53	11	28	9	19	3	123



2023 թվականին ներկայացվել է 18 ծրագրեր, որի արժեքը կազմում է **3.5 մլրդ դրամ**, որից ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում **2 մլրդ դրամ** (56.1%), համայնքի բյուջեի ֆոնդային մասը՝ **1.4 մլրդ դրամ** (41.5%) և այլ ներդրողներ (ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր և համայնքի բնակիչներ)՝ **80 մլն դրամ** (2.3%):



Մինչև տարեվերջ ներկայացվելու է

2023 թվականին ներկայացվելու են 27 ծրագրեր, որի արժեքը կազմում է **7.8 մլրդ դրամ**, որից ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում է **4 մլրդ դրամ** (52.2%), համայնքի բյուջեի ֆոնդային մասը՝ **3.7 մլրդ դրամ** (46.8%) և այլ ներդրողներ (ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր և համայնքի բնակիչներ)՝ **80 մլն դրամ** (1%)

Հավելված

Գյումրի համայնքի կողմից ներկայացվել է 5 ծրագիր 53 ենթաֆինանսավորման, որից՝ 21-ը ավարտված են

- Գյումրի համայնքի 18 փողոցների հիմնանորոգում
- Գյումրի համայնքի բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում
- Գյումրի համայնքի մշակութային կենտրոնների վերանորոգում (տիկնիկային թատրոնի կտուր և ներքին հարդարման աշխատանքներ)

7-ում ընթանում են շինարարական աշխատանքներ

- Գյումրի համայնքի 3 փողոցների հիմնանորոգում
- Գյումրի համայնքի մշակութային կենտրոնների վերանորոգում (Ասլամազյան պատկերասրահի փայտե պատշգամբ)
- Գյումրի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր

25-ում դեռևս մրցույթներ չեն հայտարարվել

- Գյումրի համայնքի 1 փողոցի հիմնանորոգում
- Գյումրի համայնքի թվով 10 մանկապարտեզների վերանորոգում
- Գյումրի համայնքի 14 սոցիալական բնակարանների վերանորոգում:

Ախուրյան համայնքի կողմից ներկայացվել է 6 ծրագիր 11 ենթաֆինանսավորման, որից՝ 11-ում ընթանում են շինարարական աշխատանքներ

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի՝ Հովիտ, Բասեն և Երազգավորս բնակավայրերի որոգման ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ բնակավայրի նախկին դպրոցի շենքը վերակառուցումը որպես մանկապարտեզ
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրի որոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքներ
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում՝ 2 փուլով
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի՝ Բենիամին, Ազատան, Երազգավորս, և Ախուրյան բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքներ՝ 2 փուլով:

**Արթիկ համայնքի կողմից ներկայացվել է 6 ծրագիր 28 ենթածրագրերով, որից՝
20-ում ընթանում են շինարարական աշխատանքներ**

- Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի կենտրոնական հրապարակի և հարակից 6 փողոցների բարեկարգում՝ ասֆալտապատման միջոցով
- Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Տուֆագործների և Թամանյան փողոցների ասֆալտապատում և Շիրակացի փողոցի մայրի կառուցում
- Արթիկ համայնքի Արթիկ, Հայկասար, Հայրենյաց, Պեմզաշեն, Սարատակ, Վարդաքար, Տուֆաշեն, Արևշատ, Հովտաշեն և Գետափ բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում
- Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 6 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

8-ում դեռևս մրցույթներ չեն հայտարարվել

- Արթիկ համայնքի Արթիկ, Արևշատ, Նահապետավան, Պեմզաշեն, Սարալանջ և Հառիճ բն. ճանապարհների տուֆ քարով սալապատում
- Արթիկ համայնքի Սպանդարյան և Նոր Կյանք բնակավայրերի որոգման համակարգերի կառուցում:

Անի համայնքի կողմից ներկայացվել է 6 ծրագիր 9 ենթածրագրերով, որից՝

4-ը ավարտված են և ֆինանսավորված

- Անի համայնքի բնակավայրերի ներհամայնքային ասֆալտապատ ճանապարհների հիմնանորոգում:
- Քարաբերդ բնակավայրի խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբար խողովակաշարի կառուցում

5-ում ընթանում են շինարարական աշխատանքներ

- Անի համայնքի սահմանամերձ Աղին և Սարակապ բնակավայրների խմելու ջրի համար խորքային հորի հորատում և պոմպի տեղադրում
- Բագրավան (Խարկով) բնակավայրի մանկապարտեզի շենքի նորոգում
- Լանջիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման ներքին ցանցի կառուցում
- Անի համայնքի Շիրակավան բնակավայրի տնամերձ հողամասերի որոգման փակ համակարգի կառուցում:

Աշոցք համայնքի կողմից ներկայացվել է 6 ծրագիր 19 ենթածրագրերով, որից՝

1-ը ավարտված է և ֆինանսավորված

- Աշոցք բազմաբնակավայր համայնքի տեխնիկական վերազինում՝ ավտոաշտարակի ձեռքբերման միջոցով

16-ը ավարտված են

- Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում պուրակի կառուցման աշխատանքներ
- Շիրակի մարզի Աշոցք համայնքի Սարագյուղ, Բավրա, Ղազանչի բնակավայրերում բնական գազի ներքին ցանցի կառուցում
- Աշոցք համայնքի Աշոցք և Փոքր Մեպասար բնակավայրերում փողոցների ասֆալտապատում
- Աշոցք համայնքի Արփենի, Բազցյուղ, Փոքր Սարիար և Կրասար բնակավայրերի խմելու ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ
- Աշոցք համայնքի Յողամարգ, Սիգավետ, Աշոցք, Գոգիովիտ, Արփենի և Մուսայելյան բնակավայրերի համայնքային կենտրոնների նորոգման և վերակառուցման աշխատանքներ

2-ում ընթանում են շինարարական աշխատանքներ

- Աշոցք համայնքի Սալուտ և Փոքր Սարիար բնակավայրերի համայնքային կենտրոնների նորոգման և վերակառուցման աշխատանքներ:

Ամասիա համայնքի կողմից ներկայացվել է 2 ծրագիր 3 ենթափուլերով

3-ը ավարտված են և ֆինանսավորված

- ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 2-րդ փողոցից մինչև 24 փողոցն ընկած հատվածի ասֆալտապատման աշխատանքներ
- ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն և Գառնադիճ բնակավայրերում փողոցային լուսավորության անցկացում:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Կարեն Բաղիշյան

4. 2022 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզում իրականացված կապիտալ շինարարության ծրագրերի մասին

ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում 2022 թվականի ընթացքում պետական բյուջեի միջոցներով և այլ ֆինանսական աղբյուրներով կատարվել են շուրջ 51 միլիարդ 500 միլիոն դրամ գումարի կապիտալ ներդրումներ:

Այդ գումարի շրջանակներում իրականացվել են վեց բնակելի շենքերի, երեսունչորս դպրոցների, մանկապարտեզների և մարզադպրոցների, տասներեք միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհահատվածների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ: 2021 թվականի համեմատությամբ ներդրումների ծավալն (40,1 մլրդ. դրամ) աճել է շուրջ 29%-ով:

Մասնավորապես.

1. **Բնակարանային շինարարության ոլորտում** 2022 թվականին իրականացվել են 2 միլիարդ 700 միլիոն դրամ գումարի շինարարական աշխատանքներ: 2021 թվականի համեմատությամբ ներդրումների ծավալն աճել է 24%-ով:

Այդ թվում

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից շահագործման է հանձնվել Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում կառուցված երկու բնակելի շենքերը՝ 36 բնակարանով և 46 երեխաների համար նախատեսված մանկապարտեզը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 1 միլիարդ 50 միլիոն դրամ:
- «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում մեկնարկել են ևս երկու, 58 բնակարանով, 9 և 7 հարկանի բնակելի շենքերի կառուցման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 2 միլիարդ 50 միլիոն դրամ: Աշխատանքների ավարտը նախատեսված է 2023 թվականին:
- ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի N1004-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 15 միլիոն 580 հազար դրամ գումար Տիգրան Մեծ պող. թիվ 5 շենքի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող թվով 3 մուտքերի ուժեղացման-վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար: Այդ աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն ավարտվելուց հետո կհստակեցվի շենքի բուն շինարարության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը: 700.0 հազար դրամ գումար հատկացվել է նաև մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքնության համար:
- ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ մարզի Աշոցք համայնքի Կոճոռ թաղամասի թվով 164 բնակիչների համար նոր բնակելի թաղամասի կառուցապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացվել է 22 միլիոն 400 հազար դրամ գումար: Փաստաթղթերի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են:
- ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1666-Ն որոշմամբ (խմբագրված 10.03.2022թ. N283-Ն և 01.12.2022թ. N1860-Ն որոշումներով) նախատեսվել է բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով լուծել 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում ժամանակավոր կացարաններում բնակվող թվով 10 ընտանիքների (ք.Գյումրի-6, Ամասիա-1, Արթիկ-2, Ախուրյան-1) բնակարանային խնդիրները:
- Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ փողոց 9/5 և 9/10 հասցեների հողամասերում մասնավոր ներդրումների հաշվին իրականացվում են երկու բնակելի համալիրների կառուցման աշխատանքներ՝ 407 բնակարանով: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 8 միլիարդ դրամ գումար:

2. **Կրթական և մարզական օբյեկտների շինարարության ոլորտում** 2022 թվականին իրականացվել են 3 միլիարդ 600 միլիոն դրամ գումարի շինարարական աշխատանքներ: 2021 թվականի համեմատությամբ ներդրումների ծավալն աճել է 115%-ով:

Այդ թվում

- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ Ասիական զարգացման բանկի և ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ «Սեյսմիկ անվտանգության բարելավման» ծրագրի շրջանակներում իրականացվում են մարզի Արթիկ համայնքի թիվ 2 և Ախուրյան համայնքի Ագատան բնակավայրի թիվ 2 դպրոցների կառուցման աշխատանքները: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 3 միլիարդ դրամ գումար: Նախատեսվում է դպրոցական շենքերը շահագործման հանձնել 2023 թվականին:
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ Համաշխարհային բանկի և ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում են Գյումրու ՈջանգակՍ, Հոռոմ և Փանիկ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի կառուցման աշխատանքները: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 533 միլիոն դրամ գումար: Փանիկ բնակավայրի մանկապարտեզի շենքը 2022 թվականին հանձնվել է շահագործման: Իսկ Նոր Կյանք բնակավայրի մանկապարտեզի շենքի շինարարական աշխատանքները, որը կազմում է շուրջ 320.0 միլիոն դրամ գումար, նախատեսվում է սկսել 2023 թվականին:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ շարունակվում է Գյումրի քաղաքում «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» ՀՈԱԿ-ի նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 5.0 միլիարդ դրամ:

Բացի 2022 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերից ՀՀ Շիրակի մարզպետի անմիջական միջնորդությամբ և նախաձեռնությամբ ընթացիկ տարում մարզում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

- «Արթիկի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքերից մեկի տանիքի հիմնանորոգման աշխատանքներ: Այդ նպատակով ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 10.1 միլիոն դրամ գումար: Աշխատանքներն ավարտվել են:
- «Հովունիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության աշխատանքներ: Այդ նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացվել է 5.0 միլիոն դրամ գումար: Դպրոցի շենքի կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2023 թվականին:

- «Ախուրյանի Նիկոլ Աղբալյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր մարզադահլիճի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: Այդ նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացվել է 4 միլիոն 600 հազար դրամ գումար: Մարզադահլիճի կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2023 թվականին:
- Մարզի Արթիկ և Արևշատ բնակավայրերում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզների կառուցման աշխատանքների նախագծերի տեղակապման և փորձաքննության համար ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացվել է շուրջ 10.0 միլիոն դրամ գումար: Մանկապարտեզների շենքերի կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2023 թվականին:
- «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացվել է շուրջ 6 միլիոն 600 հազար դրամ գումար: Բժշկական կենտրոնի շենքի կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2023 թվականին:
- Անհետաձգելի համարվող կապիտալ ծախսերի ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի N1812-Ն որոշմամբ ՀՀ Շիրակի մարզպետարանին հատկացվել է 531 միլիոն 200 հազար դրամ գումար՝ մարզի թվով 21 (որից՝ ք.Գյումրի-3, Ախուրյան-7, Ամասիա-5, Անի-1, Արթիկ-1, Աշոցք-4) դպրոցների շենքային պայմանների բարելավմանն ուղղված աշխատանքների նպատակով: Դպրոցական շենքերում իրականացվող ներքին հարդարման, տանիքների վերանորոգման, դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներն ընթացքի մեջ են:

3. Ճանապարհաշինության ոլորտում 2018-ից 2022 թվականների ընթացքում կատարված ներդրումների ծավալը կազմել է շուրջ 92 միլիարդ դրամ գումար: Հիմնանորոգվել են միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների 39 հատվածներ՝ շուրջ 244 կմ երկարությամբ:

2022 թվականին նախատեսված 13 ծրագրերի շրջանակներում իրականացվել են 24.0 միլիարդ դրամ գումարի աշխատանքներ:

ՀՀ պետական բյուջեից հատկացված 10 միլիարդ դրամ գումարի շրջանակներում հիմնանորոգվել են շուրջ 70.0 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ: 2021 թվականի համեմատությամբ 2022 թվականին կատարված ներդրումների ծավալն աճել է 5%-ով:

Բացի 2022 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերից ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ կատարվել են նաև հետևյալ աշխատանքները.

- (Գյումրի) - Կապս - Ամասիա - /Մ-1/ հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի (Գյումրի-Կապս) 10.68 կմ երկարություն ունեցող հատվածի հիմնանորոգում – 451 միլիոն դրամ: Աշխատանքներն ավարտվել են:
- Գյումրի-Արևիկ-Այգաբաց-Վարդաքար - /Հ-21/ տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի (Այգաբաց-Վարդաքար) 5.2 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում – 529 միլիոն 400 հազար դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Երևան- Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի (Թորոսգյուղի հատված) 1.8 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում – 447 միլիոն 600 հազար դրամ: Աշխատանքները նախատեսվում է սկսել 2023 թվականին:
- Երևան - Գյումրի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի (Աշոցք-Բավրա) 9.5 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում – 2 միլիարդ 340 միլիոն դրամ: Աշխատանքները նախատեսվում է սկսել 2023 թվականին:
- Իսահակյան-Գյումրի-Մ-7 հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի (Գուսաննազյուղից մինչև Շիրակի մարզի սահման) 26 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում - 3 միլիարդ 860 միլիոն դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:
- Երեբունյի տաճար հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 2.7կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում - 307 միլիոն դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

Այլ աշխատանքներ

• ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N1419-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների կողմից 2022 թվականի ընթացքում բնակարանային հաշվառման են վերցվել թվով 31 գոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած նախկին զինծառայողների ընտանիքներ: Նախորդ տարիների ընթացքում իրականացված բնակարանային բարելավման ծրագրերի շրջանակներում բնակարան ձեռք բերած կամ այլ պատճառներով ծրագրի շահառու չհամարվող թվով 50 ընտանիքներ հանվել են բնակարանային հաշվառումից:

2022 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում հաշվառված են նախկին զինծառայողների թվով 129 ընտանիքներ (այդ թվում՝ գոհված-37, հաշմանդամ-92): Նշված ընտանիքներից 5-ի բնակարանային գործերն ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարության բնակարանային հարցերի հանձնաժողովի քննարկմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նախաձեռնված գործընթացի շրջանակներում, ՀՀ Շիրակի մարզպետի հանձնարարությամբ ս/թ մայիս ամսից մեկնարկել են

նախկին տարիների ընթացքում բնակարանային հաշվառման վերցված գոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերի և նրանց մասով կազմված ամփոփ ցուցակների ճշգրտման աշխատանքները: Ս/թ մայիս ամսվա դրությամբ հաշվառված են եղել 147 ընտանիքներ:

Արձանագրված անճշտությունների վերացմանն ուղղված գործընթացի շրջանակներում.

բնակարանային հաշվառումից հանվել են	- 18 ընտանիք
համապատասխան փաստաթղթերով համալրվել և ճշգրտվել են	- 46 բնակ. գործ
նոր փաստաթղթերով համալրման և ներկայացման ենթակա են	- 35 բնակ. գործ
ուսումնասիրման փուլում են գտնվում	- 27 բնակ. գործ
համայնքների կողմից թերի ներկայացված կամ չներկայացված (Անի-1, Ամասիա-6, Ախուրյան-10)	- 17 բնակ. գործ
բնակարանային հաշվառումից ենթակա են հանման	- 4 ընտանիք

• ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N1601-Ն որոշման համաձայն՝ նախատեսվել է 2023-2027թթ ընթացքում իրականացնել ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում տեղադրված ոչ հիմնական շինությունների հաջորդաբար ազատման և քանդման, այդ շինություններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման մասով պետական աջակցության ցուցաբերման գործընթաց:

Արդեն իսկ մեկնարկել են կազմակերպչական աշխատանքները: ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակված ոչ հիմնական շինությունների և դրանցում բնակվող ընտանիքների ցուցակի ձևաչափը: Այդ ձևաչափին համապատասխան համայնքների ղեկավարները պետք է մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացնեն ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների հաստատված ցուցակները: Սահմանված ժամկետում համայնքների ղեկավարների կողմից հաստատված և մարզպետարան ներկայացված ցուցակները համարվում են վերջնական և ենթակա չեն փոփոխման:

*Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Խաչատուր Խնձրցյան*

5. ՀՀ Շիրակի մարզի համայնքներում 2022 թվականին իրականացված իրավական հսկողության արդյունքների, մարզում անցկացված ՏԻՄ ընտրությունների, համայնքային ծառայության և ՀՈԱԿ տնօրենների թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացված մրցույթների մասին

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի *նոյեմբերի 26-ի թիվ 67-Լ հրամանով* հաստատված 2022 թվականի աշխատանքային ծրագրին համապատասխան մարզի բոլոր **6 համայնքներում** իրականացվել է տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն (Անի՝ 2-րդ եռամսյակ, Աշոցք, Ամասիա և Գյումրի՝ 3-րդ եռամսյակ, Արթիկ, Ախուրյան՝ 4 եռամսյակ):

Ուսումնասիրվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման օրինականությունն ու արդյունավետությունը, համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների, քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, հողօգտագործման, պաշտպանության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության, տրանսպորտի, առևտրի և ծառայությունների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջապահության, սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության, անասնաբուժության և բուսասանիտարիայի, շրջակա միջավայրի պահպանության և զբոսաշրջության բնագավառներում:

Մարզպետի համապատասխան որոշումներով ստեղծված աշխատանքային խմբերը իրավական հսկողության ընթացքում հայտնաբերել են մի շարք խախտումներ և թերություններ, որոնք սահմանված ժամկետներում վերացնելու նպատակով համայնքների ղեկավարներին համապատասխան գրավոր առաջարկություններ են ներկայացվել:

Ընդհանուր առմամբ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

➤ Բոլոր համայնքներում խախտվել են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Չեն ապահովվել բյուջեների հաշվետվողականության, բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվների հիմնավորվածության, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատման վերահսկողությունը ավագանու անդամների կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների միջոցով, թերի են բյուջետային ուղերձներում ներառվող համապատասխան տեղեկատվությունները: Գրեթե բոլոր համայնքներում օրենքով սահմանված ժամկետի խախտումով են ներկայացվել բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ եռամսյա հաղորդումները:

➤ Չեն հաստատվել կամ թերություններով են կատարվել առևտրի, ծառայությունների, զբոսաշրջության բնագավառներին վերաբերող՝ օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգերի հաստատման գործընթացը:

➤ Ամասիա, Աշոցք, Գյումրի, Արթիկ համայնքներում չի ապահովվել ՀՀ պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակով նախատեսված պահանջը՝ նախադպրոցական հաստատություններում սահմանված չեն եղել պարտադիր հաստատման ենթակա առանձին հաստիքներ: Բացի այդ, մարզի թվով 58 նախադպրոցական հաստատություններից մինչև օրս լիցենզավորված են թվով 44-ը:

➤ Նոր միավորված բոլոր 4 համայնքներում օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ է հաստատվել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը:

➤ Բոլոր համայնքներում չեն ապահովվել բյուջեի սեփական եկամուտների ամբողջական հավաքագրումները:

➤ Բացի Ամասիա համայնքից, մարզի բոլոր համայնքներում հողային հաշվեկշիռները հաստատվել են օրենքով սահմանված ժամկետի խախտումով:

➤ Անի համայնքում չի ապահովվել ավագանու նիստերի առցանց հեռարձակման օրենսդրական պահանջը, թերություններով են կատարվել նաև ավագանու նիստերի վերաբերյալ իրազեկումները:

➤ Մարզի համայնքապետարաններում և համայնքային ենթակայության ոչ բոլոր օբյեկտներում են առկա տարահանման սխեմաները, հակահրդեհային անկյունները, վահանակներն և վարքականոնի վերաբերյալ տեղեկատվական նյութերը: Բավարար աշխատանքներ չեն տարվում նաև պատսպարման վայրերը պատրաստ վիճակի բերելու և ազդարարման համակարգերի ձեռքբերման ուղղությամբ:

Արթիկ և Ախուրյան համայնքներում իրավական հսկողությունն իրականացվել է դեկտեմբեր ամսվա ընթացքում և արդյունքները վերջնական ամփոփված ու պաշտոնապես համայնքներ ուղարկված չեն:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ արձանագրված խախտումների կամ թերությունների զգալի մասը՝ մեր կողմից սահմանված ժամկետներում արդեն իսկ վերացված են, իսկ առանձին թերությունների վերացման համար նախատեսված են ավելի երկար ժամկետներ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2022 թվականի **սեպտեմբերի 25-ին** ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքում կայացել են համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններ:

Ընտրությունների արդյունքում օրենքով նախատեսված նվազագույն ընտրական շեմը հաղթահարել են **2 կուսակցություն և 1 կուսակցությունների դաշինք**:

Նորընտիր ավագանու առաջին նիստն օրենքի ուժով հրավիրվել է նախորդ ավագանու լիազորությունների ժամկետի ավարտման օրը՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ին, սակայն համայնքի ավագանու 1-ին նիստը, ինչպես նաև հաջորդիվ հրավիրված թվով 5 նիստերը իրավագոր չլինելու պատճառով չեն կայացել:

Օրենքով նախատեսված ժամկետի ավարտից հետո ՀՀ կառավարության **դեկտեմբերի 8-ի** նիստում որոշում է կայացվել վաղաժամկետ դադարեցնել Անի համայնքի ավագանու լիազորությունները և նշանակել համամասնական ընտրակարգով ավագանու նոր ընտրություններ, իսկ ՀՀ վարչապետի նույն օրվա N 1461-Ա որոշումով նշանակվել է Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՅՈՒՅԹՆԵՐ

• Ընթացիկ տարում համայնքապետարանների կողմից հայտարարվել են թվով **276 համայնքային ծառայության** և **12 ՀՈԱԿ** տնօրենների թափուր պաշտոնների համալրման մրցույթներ, որոնցից, համապատասխանաբար կայացել են **254-ը և 14-ը** (Արթիկում 2 պաշտոնի համար անցկացվել է կրկնակի մրցույթ): Ընդհանուր հաշվով մրցույթներին մասնակցել են՝ համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար-346, իսկ ՀՈԱԿ տնօրենների թափուր պաշտոնների համար՝ 18 հավակնորդներ: Մրցույթների արդյունքում հաղթող են ճանաչվել 234 համայնքային ծառայողներ և 11 ՀՈԱԿ տնօրենի հավակնորդներ:

• Մրցույթների հայտարարման և անցկացման ժամանակ պահպանվել են օրենսդրությամբ նախատեսված հրապարակայնության, թափանցիկության և իրազեկումների ապահովման պահանջները:

• 2022 թվականի ընթացքում կազմակերպված վերապատրաստումների արդյունքում հավաստագրեր են ստացել **3 համայնքների ղեկավարներ, 17 ավագանու անդամներ, թվով 57 համայնքային ծառայողներ**:

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ և ՀՈԱԿ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՅՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/հ	Համայնքը	Պաշտոնների թիվը, որոնց համալրման համար հայտարարվել են մրցույթներ	Ներկայացված դիմումների քանակը	Կայացած մրցույթների թիվը	Հաղթողների թիվը
1	Գյումրի	5	25	4	4
2	Արթիկ	103	109	98	97
3	Ախուրյան	75	130	74	72
4	Աշոցք	55	55	51	38
5	Ամասիա	38	27	27	23
Ընդամենը		276	346	254	234
ՀՈԱԿ-ՆԵՐ					
	Գյումրի	2	3	2	1
	Արթիկ	6	11	8*	6
	Ախուրյան	4	4	4	4
Ընդամենը		12	18	12	11

* Արթիկում 2 ՀՈԱԿ-ի մրցույթներ անցկացվել են կրկնակի

*Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և
հանրապետական
գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան*

6. 2022 թվականի գյուղատնտեսական տարվա և իրականացված ծրագրերի ամփոփում

Իրականացվել է գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության հետևյալ
ծրագրերը՝

- ՀՀ կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1313-Լ որոշմամբ հաստատված
«Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022
թվականի պետական աջակցության» ծրագրի շրջանակներում մարզի համայնքների կողմից
ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացվել 4738 շահառուի դրական
եզրակացությամբ դիմում 11284 հեկտարի համար, որից՝

Հ/Հ	Համայնքը	Շահառուների կողմից ծրագրին դիմած ցանքատարածության չափը /հա/	Հա-ը	Շահառուների թիվը	Բնակավայրերի թիվը
1	Ախուրյան	5950	3040	1266	30
2	Արթիկ	4406	2526	1477	16
3	Անի	4212	3950	1306	16
4	Ամասիա	1619	1279	330	17
5	Աշոցք	475	489	359	24

Նշված ծրագրի շրջանակում ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով ՀՀ Շիրակի մարզպետի հանձնարարականով ստեղծվել է աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի կողմից կատարվել է շուրջ 260 հա աշնանացան ցորենի ցանքատարածության դիտարկում՝ 28 բնակավայր, 246 շահառու:

- «ՀՀ-ում հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերմանն աջակցության» ծրագրի շրջանակում մարզի 4946 հողօգտագործողների կողմից ձեռք է բերվել շուրջ 3639 տոննա ազոտական պարարտանյութ, որի սուբսիդավորման գումարը կազմել է 655 մլն դրամ:

Հ/Հ	Համայնքը	Իրացված ազոտական պարարտանյութի քանակը /տոննա/	Սուբսիդավորման գումարը /դրամ/
1	Ախուրյան	2613.65	470 457 000
2	Արթիկ	623.8	112 284 000
3	Անի	308.1	55 458 000
4	Ամասիա	59.45	10 701 000
5	Աշոցք	34	6 120 000

- «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2021թ. 1418 հա ապահովագրված այգիների և ցանքատարածությունների հետ համեմատած 2022թ. մարզում ապահովագրվել է 1764 հա այգիներ և ցանքատարածություններ: Այս ցուցանիշով Շիրակի մարզը հանրապետությունում առաջինն է:

4. «ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության» ծրագրի շրջանակում 2022թ. 21 լիզինգառուի տրամադրվել է 31 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 14 տրակտոր, 17 այլ գյուղատնտեսական տեխնիկա, լիզինգի գումարը կազմել է 123.4 մլն դրամ, իսկ 2021 թվականին 28 լիզինգառուի տրամադրվել է 49 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 14 տրակտոր, 35 այլ գյուղատնտեսական տեխնիկա, լիզինգի գումարը կազմել է 423.1 մլն դրամ:
5. «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մեկնարկից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ 8835 վարկառուի տրամադրված վարկերի գումարը կազմել է 20,1 մլրդ դրամ:
6. «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակում 2022թ. հաստատվել է Շիրակի մարզի շահառուների կողմից ներկայացված 18 հայտ 1,4 մլրդ դրամի չափով, կնքվել է 563 հումքի գնման պայմանագիր, սուբսիդավորման գումարը կազմել է 82,3 մլն դրամ, իսկ 2021թ. 5 հայտ՝ 430.0 մլն դրամի չափով, կնքվել է 577 հումքի գնման պայմանագիր, սուբսիդավորման գումարը կազմել է 13.6 մլն դրամ:
7. «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում» 2022թ. հաստատվել է Շիրակի մարզի շահառուների կողմից ներկայացված 49 հայտ 820,4 մլն դրամի չափով, սուբսիդավորման գումարը կազմել է 76,9 մլն դրամ, իսկ 2021թ. 23 հայտ՝ 246.6 մլն դրամի չափով, սուբսիդավորման գումարը կազմել է 13.7 մլն դրամ:
8. «Փոքր ու միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագրի շրջանակում Արթիկ քաղաքում և Մեծ Մանթաշ բնակավայրում 3-րդ մոդելի մեկական ջերմատուն կառուցելու ծախսերի մասնակի փոխհատուցման համար կնքվել է 2 պայմանագիր՝ շուրջ 28.3 մլն դրամ ընդհանուր գումարով, Ադին բնակավայրում կառուցվել է 1-ին մոդելի ջերմատուն, տրվել է 3.0 մլն դրամ փոխհատուցում:

2022 թվականի ընթացքում իրականացված պետական օժանդակության ծրագրերի ամփոփ տեղեկատվություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը դեռևս չի տրամադրել:

Իրականացվել է նաև առավել վարակված 5441 հեկտար տարածության վրա մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ, որի շրջանակներում «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մարզին անհատույց տրամադրվել էր 435.28 լիտր թունանյութ:

«Կանաչ գյուղատնտեսություն» նախաձեռնության ծրագրի շրջանակներում ս/թ հունիսի 8-ին մարզի Ախուրյան համայնքի Ղարիբջանյան և Առափի բնակավայրերում պաշտոնապես

գործարկվեցին «Կանաչ» ստանդարտներով վերազինված գյուղատնտեսական արտադրական տարածքներ, որոնք արդիականացվել են նոր և ռեսուրսներ խնայող տեխնոլոգիաներով:

Ղարիբջանյանում բացված արտադրամասը՝ «Մանի Ֆուդը», հիմնովին վերանորոգված հետերքահավաքի պահածոների գործարան է: Այն ընտանեկան բիզնես է, որի նպատակը որակյալ, էկոլոգիապես մաքուր և անվտանգ պահածոների արտադրությունն է: Իսկ Առափիում բացվել է «Հարմոնի Ֆարմ» դեղաբույսերի աճեցման ցուցադրական կենտրոն, այն զբաղվում է բարձրորակ խոտաբույսերի, համեմունքների և լոբազգիների մշակությամբ և մշակմամբ, ինչպես նաև սերմնաբուծությամբ, որը կնպաստի Շիրակի մարզում կանաչ գյուղատնտեսության զարգացմանը՝ ոլորտում զբաղվողներին ցույց տալով կանաչ գյուղատնտեսության առավելությունները:

«ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» ծրագրի ՄԱԶԾ բաղադրիչի շրջանակներում Ազատանում ս/թ մարտի 22-ին բացվել է «Մաքի» տոհմային ոչխարաբուծության գենետիկ կենտրոն, որի նպատակն է մաքրացել ոչխարների բուծումը, բազմացումն ու արհեստական սերմնավորումը, տարածաշրջանի ոչխարաբուծներին աջակցելու համար կիրականացվեն նաև ախտորոշիչ և անասնաբուժական ծառայություններ: Կենտրոնը ստացել է մաքրացել կենդանիներ, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ սարքավորումներն արհեստական սերմնավորման, կենդանիների հղիության հաստատման և որոշ հիվանդությունների ախտորոշման համար:

«Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում» (EU-GAIA) ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Շիրակի պետական գյուղատնտեսական քոլեջում բացվել է Հողի անալիզի լաբորատորիա և քիմիական լսարան, այն կարևոր նշանակություն կունենա համալսարանի կրթական որակի բարձրացման գործում, ծառայություններ կմատուցի մարզի ֆերմերներին ու տեղի այլ տնտեսավարողների՝ հանդիսանալով մասնագիտական վերապատրաստման ժամանակակից ուսումնական կենտրոն: Հողի անալիզի նորաբաց լաբորատորիայում բացի հողի փորձաքննությունից, հնարավորություն կա իրականացնել բույսի և ջրի հետ կապված տարբեր հետազոտություններ ու ուսումնասիրություններ, ինչն էլ մարզում գյուղատնտեսության զարգացմանը խթանելու ևս մեկ հնարավորություն է:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը հրատապ տեխնիկական համագործակցության ծրագիր՝ Հայաստանում խոցելի փոքր գյուղացիական տնտեսությունների պարենային անվտանգության և կենսապահովման պայմանների բարելավման նպատակով մարզի

350 շահառուի անվճար տրամադրել է 105 տոննա աշնանացան ցորենի սերմացու, որով կատարվել է 350 հա ցանք:

ՇԵՆ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Անասնակերի արտադրություն և արտոնների բարելավում՝ որպես ՔՈՎԻԴ-19 հետևանքների մեղմման միջոցառում» ծրագրի շրջանակներում մարզում իրականացվել է՝

- Վարելահողերի բարելավում – Ամասիա համայնքի Ամասիա, Գտաշեն, Բյուրակն, Հովտուն բնակավայրերից 15.6 հա հողատարածք, 11 ֆերմերներ:
- Արոտավայրի բարելավում – 20 հա արոտավայր Ամասիա համայնքում, որն իրականացվել է համայնքի հետ համագործակցությամբ:

2022 թվականի օգոստոս ամսին «Արաքս թռչնաֆաբրիկա» փակ բաժնետիրական ընկերությունը բարեգործական հիմունքներով մարզին է տրամադրել շուրջ 8500 թև 1 օրական ճտեր, որոնք բաշխվել է Աշոցք և Անի համայնքների շուրջ 340 ընտանիքների:

Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության 2-րդ ծրագրի շրջանակներում մարզում իրականացվել է շուրջ 1.2 մլրդ դրամի աշխատանքներ:

Կատարվել է հետևյալ աշխատանքները.

1. 11 համայնքում իրականացվել են ջրաբեկացման համակարգերի կառուցման աշխատանքներ, շուրջ 40,0 կմ ջրագիծ, 30 խմոց, 10 հովվի տնակ և կենդանիների 10 հատ հավաքատեղի, շուրջ 870,912 մլն դրամ:

2. 3 համայնքում ստեղծված «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 21 միավոր գյուղտեխնիկա, որից՝ 4 տրակտոր, շուրջ 74,9 մլն դրամ:

3. Գյուղատնտեսության ոլորտի 6 արտադրող/վերամշակողների տրամադրվել է 136,3 մլն դրամ դրամաշնորհ:

4. Կենդանիների հավաքատեղիների կառուցում՝ Աշոցք (Հարթաշեն, Բավրա, Մեծ Սեպասար) և Ամասիա (Ամասիա, Մեղրաշատ, Արեգնադեմ) համայնքներում 31,27 մլն դրամ:

5. Աշոցքի (Թորոսգյուղ) անասնաբուժական սպասարկման կենտրոնի հիմնում և կահավորում 71,69 մլն դրամ:

6. Գյումրիի սելեկցիոն կայան ՓԲԸ-ի համար գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում 23,95 մլն դրամ:

7. Փանիկի անասնաբուժական սպասարկման կենտրոնի համար անասնաբուժական ավտոմեքենայի ձեռքբերում 7,26 մլն դրամ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում՝ 2021-2022թթ.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /+-/ /հա/
		2021թ.	2022թ.	
1	Հացահատիկ և հատիկալնդեղեն	36074	31640	-4434
	որից՝ աշնանացան ցորեն	14945	12672	-2273
	գարնանացան հացահատիկ	20918	18822	-2096
	գարնանացան հատիկալնդեղեն	211	146	-65
2	Կարտոֆիլ	3337	3489	+152
3	Բանջարանոցային մշակաբույսեր	1284	1264	-20
4	Տեխնիկական մշակաբույսեր	78	80	+2
5	Կերային մշակաբույսեր	10765	9574	-1191
Ընդամենը		51538	46047	-5491

2023թ. բերքի տակ կատարվել է **18203** հա աշնանացան ցորենի ցանք, որը 2022թ. հետ համեմատ ավելի է **5531** հա-ով:

Բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2021-2022թթ. ունի հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Միջին բերք /ց/	
		2021թ.	2022թ. /կանխատեսվող/
1.	Հացահատիկ և հատիկալնդեղեն	8,3	22
2.	Կարտոֆիլ	170,6	170
3.	Բանջարեղեն	132,7	136
4.	Պտղատու այգիներ և հատապտղանոցներ	50,6	44

Ջրամբարների լցվածությունը 2022թ. ոռոգման սեզոնի մեկնարկին համեմատած 2021թ. հետ ունի հետևյալ տեսքը.

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ ³ /	Լցվածությունը առ 14.06.2021թ. /մլն մ ³ /	Լցվածությունը առ 14.06.2022թ. /մլն մ ³ /	Աճ/նվազում +/- /մլն մ ³ /
1	Ախուրյան	525	170,0	391,9	221,9
2	Արփի լիճ	105	67,7	64,8	-2,9
3	Կառնուտ	22,6	7,85	13,76	5,91
4	Սառնաղբյուր	4,8	1,48	1,63	0,15
5	Վարդաքար	5	2,67	1,47	-1,20
6	Թավշուտ	6	2,58	3,06	0,48
7	Մանթաշ	8,2	6,05	6,68	0,63
8	Ջաջուտ	0,28	0,16	0,20	0,04
Ընդամենը		151.88	88.49	91.6	+3.11

Լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

«Շիրակ» ՋՕԸ-ի 2022թ. ջրառը, ջրտուրքը և գանձումները 16.12.2022թ. դրությամբ հետևյալն են.

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը	Չափի միավորը
1	Ջրառ	43157	հազ. մ ³
2	Ջրտուրք	15057	հազ. մ ³
3	Հասույթ	165627	հազ. դրամ
4	Գանձում	132000	հազ. դրամ
5	Գանձման տոկոս	79,6	%
6	Ոռոգված տարածք	6005	հա

Անասնաբուժարական վիճակ.

Շիրակի մարզում 2022 թվականին արձանագրվել է «Բրուցելոզ» հիվանդության 600 դեպք որից՝ 250 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների և 350 գլուխ մանր եղջերավոր կենդանիների մոտ: Հայտնաբերված հիվանդ կենդանիները ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին Շիրակի մարզային կենտրոնի հսկողությամբ ենթարկվել են հարկադիր սպանդի:

2022 թվականին մարզի չորս համայնքներում արձանագրվել է նաև մանր եղջերավոր կենդանիների ծաղիկ հիվանդության դեպքեր:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում կատարվել են հակահամաճարակային հետևյալ միջոցառումները՝

Հ/Հ	Կենդանի	Միջոցառում	Ընդամենը /գլուխ/	Կատարված /գլուխ/	Չկատարված /գլուխ/
1	ԽԵԿ	Բրուցելոզ	80987	74146	6841
2		Լեյկոզ	764	619	145
3		Տուբերկուլինիզացիա	3140	0	3140
4		Սիբիրախտ	134000	119841	14159
5		Էմկար	135364	128877	6487
6		Հանգուցային մաշկաբորբ	15137	14663	474
7		Դաբաղ	239000	222470	16530
8	ՄԵԿ	Բրուցելոզ	52000	32500	19500
9		Դաբաղ	30070	29807	263
10		Ծաղիկ	9839	9839	0
11		Սիբիրախտ	2152	2152	0
12	ՁԻ	Խլնախտ	70	0	70
13		Սիբիրախտ	257	105	152

*Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ Ռոման Համայակյան*

7.2.2 Շիրակի մարզի առողջապահական հաստատությունների տեխնիկական հագեցվածության, բուժաշխատողների հավաստագրման գործընթացի մասին:

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործում են թվով 27 բժշկական հաստատություն, որոնցում ծավալված մահճակալների թիվը 513 է, աշխատակիցների թիվը՝ 2202

Մարզի բուժհաստատություններին 2022 թվականին տրամադրված պետական պատվերի բյուջեն 1-ին կիսամյակի վերանայումից հետո կազմել է 4 746 335.9 հազ.դրամ, ինչը 2021 թվականի բյուջեի համեմատությամբ /4 771 427.0 հազ.դրամ / նվազել է 25 091.1 հազ. դրամով: Մինչև տարեվերջ նս սպասվում է պետական պատվերի բյուջեի վերանայում :

2022 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 989 765.0 հազ. դրամ 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ /931 762.8 հազ. դրամ/ ավելացել է 58002.2 հազ. դրամով:

2022 թվականի նոյեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների դեֆիտորական պարտքը կազմում է 122 964.7 հազ. դրամ 2021 թվականի համեմատ /157 295.9 հազ. դրամ/ նվազել է 34 331.2 հազ.դրամով, իսկ կրեդիտորական պարտքը՝ 648 771.5 հազ.դրամ, 2021 թվականի համեմատ /486364.1 հազ.դրամ/ ավելացել է 162 407.4 հազ. դրամով:

2022 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատություններում իրականացվել են 30 502.0 հազ. դրամի վերանորոգման աշխատանքներ:

2022 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատությունները մարզպետարանի միջնորդությամբ առողջապահության նախարարության կողմից, ինչպես նաև սեփական միջոցների հաշվին համալրվել են նոր և ժամանակակից սարքավորումներով, մասնավորապես՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են սոնոգրաֆիայի և էլեկտրոնեյրոմիոգրաֆիայի սարքեր:

«Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» ՓԲԸ-ին «Անալիզ Մեդ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է իմունոֆերմենտային վերլուծիչ:

«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» և «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ներին տրամադրվել են թվային ռենտգեն սարքեր:

«Մարալիկի առողջության կենտրոն» և «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ –ներին տրամադրվել են շարժական թվային ռենտգեն սարքեր:

«Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն» և ԲԳյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա՝ ՓԲԸ-ները համալրվել են իմունոֆերմենտային վերլուծիչ սարքերով:

«Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ-ն լիզինգով ձեռք է բերել սոնոգրաֆիայի սարք:

«Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ-ն ձեռք է բերել լապարասկոպիկ վիրահատական գործիքների հավաքածու:

Մարզում պատվաստումային գործընթաց իրականացնող բժշկական հաստատություններին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են սառնարաններ և սառցարաններ:

2022 թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատություններում ներդրվել են բժշկական օգնության և սպասարկման նոր ծառայություններ, մասնավորապես՝

ՀՀ առողջապահության նախարարի 23.11.2018 թիվ 3021-Ա հրամանի 4-րդ կետով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2022 թվականից գործարկվել է «Իշեմիկ ինսուլտի թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբեկտոմիայի ծառայություն»ը :

«Արթիկի Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ներդրվել է ախտաբանաանատոմիական ծառայություն:

«Արթիկի մոր և մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվում են լապարասկոպիկ վիրահատություններ:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան մարզի բժշկական կազմակերպություններում աշխատող 394 ավագ բուժաշխատողից հավաստագրվել է 150-ը. հավաստագրման հայտ ներկայացրել է 210-ը, 34 ավագ բուժաշխատողի հավաստագրման գործընթացն ընթացքի մեջ է, 1026 միջին բուժաշխատողից հավաստագրվել է 231-ը, հավաստագրման հայտ ներկայացրել է 756-ը, 39 միջին բուժաշխատողի հավաստագրման գործընթացն ընթացքի մեջ է:

2022 թվականի ընթացքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի Գյումրու բաժնի կողմից իրականացվել են տեսչական ստուգումներ ՀՀ Շիրակի մարզպետարանի թվով 11 բժշկական կազմակերպությունում: Ստուգումների արդյունքում՝ կախված հայտնաբերված խախտումների ծավալից և բնույթից հարուցվել են վարչական վարույթներ բոլոր բժշկական կազմակերպություններում: Տեսչական մարմնի կողմից ներկայացված ակտերում առկա թերությունները, դրանց պատճառները և վերացման ճանապարհները քննարկվել են մարզպետարանում :

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության

8.2.2 Շիրակի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կամավոր ատեստավորման արդյունքների, մարզում ներառական կրթության կազմակերպման մասին

ՀՀ Շիրակի մարզում գործում են 160 հանրակրթական դպրոցներ, որոնցից 146-ը մարզային ենթակայության, 12-ը՝ ՀՀ ԿԳՄՄՆ և 2-ը ոչ պետական:

2022 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի դպրոցներ հաճախել են 31781 աշակերտ, որից 27594--ը՝ մարզային ենթակայության, 4106-ը՝ ՀՀ ԿԳՆ ենթակայության և 81-ը՝ ոչ պետական ուսումնական հաստատություններ:

2022 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի 65 դպրոցահեն նախակրթարաններ են հաճախում 725 սան:

Ներառական կրթության ծրագրի մեջ ընդգրկված աշակերտների թիվ՝ 824 /2021թ -962/ : Իրականացնող դպրոցների թիվը՝ 96 /2021թ – 99/: 2023-2024 ուստարում նախատեսվում է ներառական կրթություն իրականացնել նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Մարզային ենթակայության 146 դպրոցներից 60-ում առկա է թեքահարթակ, որից 20-ը կառուցվել է 2022 թվականին:

Առաջին դասարանցիների թիվը 2022 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ 2891 աշակերտ :

Մարզի բոլոր դպրոցները համալրված են դասագրքերով:

2022 թվականին 7-13 տարեկան 380 աշակերտ՝ (Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և բազմազավակ ընտանիքների), մեկնել են Հանքավանի «Արագած» ճամբար՝ ամառային հանգստի:

Մեղալակիրների թիվ՝ 17 շրջանավարտ/Արագածոտն-0,Արմավիր-0,Արարատ-1,Գեղարքունիք-1,Վայոց Ձոր-1,Տավուշ-3,Լոռի-5,Կոտայք-9,Երևան-9,Սյունիք-15,Շիրակ-17/:

2022 թվականին մարզային ենթակայության 146 դպրոցներից պարտադիր վերապատրաստում անցել են 965 ուսուցիչ, իսկ կամավոր ատեստավորում՝ 65 ուսուցիչներ: Նախորդ՝ 2021 թվականին 24 ուսուցիչներ : Հարկ է նշել, որ կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներից 7-ը ստացել են 90-100% դրական արդյունք և ստանում են 50% աշխատավարձի հավելավճար, 29-ը ստացել են 80-89% դրական արդյունք և ստանում են 40% աշխատավարձի հավելավճար, 29-ը ստացել են 70-79% դրական արդյունք և ստանում են 30% աշխատավարձի հավելավճար:

Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչները ներկայացնում են մարզի 43 դպրոցներ՝ 18-ը քաղաքային, 25՝ գյուղական:

2021-2022 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցել են 151 աշակերտներ, մրցանակներ՝ 27 դիպլոմ, 24 գովասանագիր: Հարկ է նշել, որ վերջին տարիներին Շիրակի մարզը ստացված դիպլոմների և գովասանագրերի քանակով զիջում է միայն Երևան քաղաքին: (I կարգ-4, II կարգ-11, III կարգ-12, գովասանագիր-24):

Ֆիզկուլտուրա և սպորտ

❖ Կազմակերպվել են պետական ծրագրերով իրականացվող մարզական-զանգվածային համայնքային՝ 42 ,մարզային՝ 19 միջոցառումներ, ընդհանուր՝ 3647 մասնակցով: Ապահովվել է մարզի 289 ներկայացուցիչների մասնակցությունը մարզական-զանգվածային միջոցառումների հանրապետական եզրափակիչ փուլի մրցումներին:

Միջոցառումների եզրափակիչ փուլերում խաղարկված 37 ոսկե մեդալներից 14-ը(37,8%-ը) նվաճել են Շիրակի մարզի թիմերն ու մարզիկները: Այդ թվում.

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ»՝ 8 ոսկե մեդալ,

–սեղանի թենիս մրցաշար 2

–լողի մրցաշար 1

–խճուղավազքի մրցաշար 5

«ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների աշակերտների միջև սպարտակիադա»՝ 4 ոսկե մեդալ,

– հնգամարտ 1

–բազկամարտ 1

–բասկետբոլ 1

–շախմատ 1

«ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրակրթական դպրոցների 1–3–րդ և 4–6–րդ դասարանների աշակերտների միջև սպորտլանդիա»՝ 1 ոսկե մեդալ,

ՀՀ դպրոցականների շախմատի 16–րդ օլիմպիադա՝ ոսկե մեդալ:

❖ ՀՀ Շիրակի մարզպետարանից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացված հայտերի հիման վրա ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24–ի N1816–Ա որոշմամբ, անհատույց սեփականության իրավունքով, Շիրակի մարզում գործող 17 մարզադպրոցի հատկացվել է 41 անուն մարզագույք՝ ընդհանուր 87 մլն 116 հազար դրամ արժողությամբ:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյան